

90006



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Արամ Մեյմարյան

«19» 09 2024թ.



**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 186 - 24

Նախաձեռնող՝

«ԿՈՆՍՏԱԼ» ՍՊԸ

ք. Երևան Հովսեփ Էմինի փ./պ/6/7 Արաբկիր 0012

Գործունեությունը՝

**Աբովյան համայնքի Աբովյան բնակավայրի
2-րդ արդյունաբերական թաղամաս թիվ 20 շինություններ
հասցեում ալյումինե պրոֆիլների և դեֆալների
արտադրություն
Կոֆայքի մարզ**

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 186 - 24

«19» սեպտեմբեր 2024թ.

Այլումինե պրոֆիլների և դետալների արտադրություն

Նախաձեռնող՝	«ԿՈՆՍՏԱԼ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ՇՄԱԳ հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, Աբովյան բնակավայր, 2-րդ արդյունաբերական թաղամաս, թիվ 20 շինություններ

Ներածական մաս. Փորձաքննության ներկայացված ՇՄԱԳ հաշվետվությամբ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, Աբովյան բնակավայրի 2-րդ արդյունաբերական թաղամասի, թիվ 20 շինություններ հասցեում: Նախագծով նախատեսվում է իրականացնել այլումինե պրոֆիլների և դետալների արտադրություն: Պատվիրատուին սեփականության իրավունքով (սեփականության վկայականը՝ N 19102023-07-0063) պատկանող 2,286435 հա մակերեսով հողամասը գտնվում է արդյունաբերական գոտում: Հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, իսկ գործառնականը՝ արդյունաբերական օբյեկտների: «ԿՈՆՍՏԱԼ» ՍՊԸ-ը նախատեսում է վարձակալել Արմեն Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքից 5500 քմ և իրականացնել այլումինե պրոֆիլների և դետալների արտադրություն՝ տարեկան 550 տ արտադրողականությամբ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի, 5-րդ կետի «գ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Հաշվետվության կազման համար հիմք է հանդիսացել՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 26.02.2024թ. տրամադրված թիվ ՏԱ-10 տեխնիկական առաջադրանքը:

Նկարագրական մաս. Սույն նախագծում բոլոր տեխնոլոգիական գործընթացները



մշակված են ՀՀ-ում գործող բնապահպանական, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային և այլ նորմերին համապատասխան: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում որևէ շինարարական աշխատանքներ չեն իրականացվելու, այլ արդեն գոյություն ունեցող շենք-շինություններում տեղադրվելու են համապատասխան սարքավորումները:

Նախապատրաստած հումքը արտադրամաս առաքելուց հետո բեռնաթափվելու և նախապատրաստվելու է արտադրության գործընթացում օգտագործելու համար: Նախապատրաստած հումքը նախնական տաքացվելու է՝ մինչև էքստրուզիան: Նախքան գործընթացի սկսելը՝ պատրաստվելու և ստուգվելու են ջեռուցման վառարանները և սարքավորումները: Հումքը տեղադրվելու է ջեռուցման վառարանում և տաքացվելու է 400-450° C՝ կախված այլումինի համաձուլվածքի տեսակից և արտադրություն պահանջներից: Հանելով ջեռոցից՝ հումքը հասցվում է մինչև սենյակային ջերմաստիճան:

Այլումինե պրոֆիլի էքստրուզիան այլումինե երկար ձողեր ստեղծելու գործընթաց է մատրիցայի միջով՝ էքստրուդեր կոչվող մամլիչով: Տաքացած հումքը բեռնվում է էքստրուդերի խցիկը, ճնշման տակ մտնում է էքստրուդացման գոտի և անցնում է մատրիցայի ֆիլեռով: Ճնշման տակ տաքացված այլումինե զանգվածն մատրիցայի անցքերով անցնելուց հետո ձևավորում է ցանկալի պրոֆիլը:

էքստրուզիայից հետո այլումինե պրոֆիլը անցնելու է սառեցման գործընթացով, որն իրականացվելու է սարքավորումների միջոցով (օդ, սառեցման խցիկներ): Սառեցման օդային խցիկում պրոֆիլը անցնելու է խողովակաշարով, որում ստեղծվում է սառը օդի հոսք: Այս գործընթացը թույլ է տալիս կարճ ժամանակահատվածում պրոֆիլի միատեսակ սառեցում:

Սառելուց հետո էքստրուդացված այլումինե պրոֆիլը ձգվելու է՝ կտրման ցանկալի չափի և ձևի հասնելու համար: Պրոֆիլը տեղադրվելու է հատուկ կաղապարի մեջ և ենթարկվելու է ձգման՝ հիդրավլիկ մամլիչով: Սա թույլ է տալիս մեծացնել պրոֆիլի երկարությունը և նվազեցնել շեղումները: Այնուհետև պրոֆիլը կտրվելու է պահանջվող երկարության հատվածներով օգտագործելով կտրող շրջանաձև սղոցներ: Կտրումից հետո պրոֆիլի ծայրերը մշակվելու են:

Այլումինե պրոֆիլը անցնելու է որակի հսկողություն և ստուգում: Որակի նախնական ստուգումից հետո հնարավոր է նյութի մշակման 3 եղանակ՝ փոշեներկում, անոդացում, փաթեթավորում՝ որակի կրկնակի ստուգումից հետո: Փաթեթավորումը կարևոր գործընթաց է այլումինե պրոֆիլի փոշեներկման գործընթացում, քանի որ այն ապահովում է պատրաստի արտադրանքի պաշտպանություն՝ բեռնման, փոխադրման և բեռնաթափման աշխատանքների ընթացքում: Փաթեթավորման գործընթացի առաջին քայլը էքստրուդացված այլումինի պրոֆիլների մակերեսը պաշտպանելն է: Դա արվում է պատրաստի արտադրանքի վրա պաշտպանիչ շերտ անցկացնելով, օրինակ՝ պլաստիկ թաղանթ կամ թուղթ: Փոխադրման ընթացքում այս շերտը պաշտպանում է պրոֆիլները քերծվածքներից: Պաշտպանիչ շերտն անցկացնելուց հետո էքստրուդացված այլումինե պրոֆիլները խմբավորվում են ըստ իրենց չափերի, ձևի և ցանկացած այլ բնութագրիչի որոշ



պահանջում է հաճախորդը կամ նախագիծը: Պրոֆիլները խմբավորելուց հետո դրանք կապվում են ժապավեններով, և այլ ջերմակայուն փաթեթավորման նյութերով: Պրոֆիլների փաթեթավորումն ապահովում է անվտանգ տեղափոխումը:

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են մթնոլորտ արտանետումների հետ՝ անոդացման ընթացքում և վառարանում հնեցման ժամանակ: Վառարանների աշխատանքի ընթացքում արտանետվում են՝ ազոտի օքսիդներ 0.2 գ/կգ, ածխածնի օքսիդ 0,9 գ/կգ: Վառարանները աշխատում են բնական գազով, պահուստային վառելիք նախատեսված չէ: Գազի տարեկան ծախսը վառարաններում միասին կազմում է 24000 մ³/տարի: Արտանետվում են՝ ազոտի և ածխածնի օքսիդներ, որոնք հաշվարկվել են համապատասխանաբար՝ 2.15 կգ/1000.0 մ³ և 12.9 կգ/1000.0 մ³ գործակիցներով: Ջեռուցման և տաք ջրամատակարարման համար վարչական շենքում տեղադրված է 1 ջրատաքացուցիչ կաթսա 5 մետր բարձրությամբ և 0.2 մետր տրամագծով: Գազի ծախսը 10000.0 մ³/տարի է: Արտանետվում են ազոտի և ածխածնի օքսիդներ, որոնք հաշվարկվել են համապատասխանաբար՝ 2.15կգ/1000.0 մ³ և 12.9կգ/1000.0 մ³ գործակիցներով:

վնասակար նյութերի ցրման հաշվարկի հակիրճ արդյունքները

Նյութի անվանումը	Առավելագույն գետնամերձ կոնցենտրացիան մգ/մ ³		ՄՊԳ 1000մ	բնակելի գոտի
	առանց ֆոնի			
Ածխածնի օքսիդ	0.0041691ՍԹԿ 0.0208455 մգ/ մ ³	0.1641691 ՍԹԿ 0.8208457մգ/մ ³	0.1641691 ՍԹԿ 0.8208457մգ/մ ³	բնակելի գոտին հեռու է ավելի քան 1կմ
Ազոտի օքսիդներ	0.027018ՍԹԿ 0.0054036մգ/ մ ³	0.0304518ՍԹԿ 0.0060904մգ/մ ³	0.0304518ՍԹԿ 0.0060904մգ/մ ³	

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել է մաքրման կայանի տեղադրում՝ անոդացման գործընթացում առաջացող էլեկտրոլիտների ջրերի մաքրման նպատակով: Այն գործելու է շրջանառու փակ համակարգով, մաքրված ջուրը վերադարձվելու է պրոցես: Ջրի հոսքը կազմում է շուրջ 30խմ/ժ, քիմիական-ֆիզիկական սարքավորումը նախատեսված է լինելու 35խմ/ժ: Այն տեղադրվելու անոդացման գործընթացի իրականացման վայրի կից տարածքում: Հիմք ընդունելով վերոգրյալը կարելի է եզրակացվել, որ գործունեության արդյունքում տեղանքի ջրային ռեսուրսները զերծ են հնարավոր աղտոտումից:

Հողային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չի կարող լինել, քանի որ նախատեսվող գործունեության ընթացքում որևէ հողային աշխատանքներ նախատեսված չեն: Տարածքը ամբողջությամբ զուրկ է բուսական ծածկույթից, քանի որ արդեն շենք շինությունները գոյություն ունեցող են և տարածքը կառուցապատված է:

Բոլոր հումքատեսակները և արտադրական մնացորդները ընդունվում և պահեստավորվում են փակ շինության մեջ՝ դրանց համար նախատեսված համապատասխան բնոստայան



տեղամասերում, բացառելով հողածածք տարածքները հնարավոր աղտոտումը:

Գործունեության արդյունքում առաջացած թափոնները՝ ըստ իրենց վտանգավորության դասերի: Ընկերությունում հավաքվում և պահեստավորվում են դրանց համար նախատեսված ժամանակավոր կուտակման վայրերում: Այդ տարածքները կահավորված են աշխատանքի անվտանգության պահանջներից ելնելով, ինչպես նաև բնապահպանական նորմերի և պահանջների համաձայն:

Շահագործման աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/ մոտ 1,32 տ /յուրաքանչյուր ամիս մոտ 110 կգ/110x12=1320 կգ/, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջանալու են նաև այլումինե պրոֆիլների կտրումից առաջացած այլումինի մանրակտորներ, որոնք նախատեսվում է վաճառել այլումինե արտադրությամբ զբաղվող ընկերություններին, քանակը կկազմի մոտ 25 տ/տ:

Պարճառաքանական մաս. Հաշվետվության շրջանակներում կատարվել է գործունեությանն առնչվող գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն, նախատեսվել է գործունեության իրականացման արդյունքում հնարավոր բնապահպանական և սոցիալական վնասակար ազդեցությունների կանխատեսումը և դրանց կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված համապատասխան մեղմման միջոցառումներ, դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմներ: Նախատեսվող գործունեության համար կպահանջվեն աշխատանքային ռեսուրսներ: Ընդհանուր առմամբ սպասարկող անձնակազմի թվաքանակը նախատեսվում է 245 մարդ: Անձնակազմի հավաքագրման ընթացքում առաջնապատվություն կտրվի տեղի բնակչությանը: Սպասարկող անձնակազմը կապահովվի անհրաժեշտ արտահագուստով, անձնական պաշտպանիչ միջոցներով: ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան նրանց համար կապահովվեն նախատեսված սննդի ընդունման հնարավորություններ, սաննհանգույցներ, լոգարաններ, հանգստի պայմաններ և այլն:

Նախատեսվող գործունեության հիմնական բնապահպանական ազդեցությունը պայմանավորված է թափոնների վնասակար հատկություններով, ինչպես նաև մթնոլորտ արտանետվող նյութերով: Հիմնական նյութերն են ազոտի երկօքսիդները, ածխածնի մոնօքսիդը, երկաթի օքսիդը: Օդում ածխածնի մոնօքսիդի, ազոտի երկօքսիդի և երկաթի օքսիդի պարունակությունը վերահսկելու համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկումներ): Այդ նպատակով նախատեսվում է պայմանագիր կնքել մասնագիտացված բնապահպանական կազմակերպության հետ, որը արտադրամասի շահագործման ընթացքում կիրականացնի չափումներ՝ ածխածնի մոնօքսիդի, ազոտի երկօքսիդների և երկաթի օքսիդի պարունակությունները որոշելու համար: Նախատեսվում է նաև աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ գործընթացի



ընթացքում հատկացնել 375.000 դրամ:

Եզրափակիչ մաս. Հանրային լուսմների ծանուցումն իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում: Հանրային լուսմների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության առաջարկություններն և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Փորձաքննական ամբողջ գործընթացին ներգրավվել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում, շրջակա միջավայրի վրա հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծության համաձայն, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

1. Պահպանել՝ ՀՀ Կառավարության 2006թ. փետրվարի 2-ի՝ «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվների վերաբերյալ» 160-Ն որոշմամբ սահմանված պահանջները:
2. Պահպանել՝ ՀՀ առողջապահության նախարարի 2010թ-ի «Կազմակերպությունների աշխատատեղերում աշխատանքային գոտու օդում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները N 2.2.5-004-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 27 հրամանի պահանջները:
3. Պահպանել՝ ՀՀ առողջապահության նախարարի 2006 թվականի 17 մայիսի՝ «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆ N 2.2.4-009-06 հաստատելու մասին» N533-Ն հրամանի պահանջները:
4. Թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման ուղղված միջոցառումները իրականացնել ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:
5. Արտադրական պատահարները բացառելու և կանխարգելելու նպատակով արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման ամբողջ ընթացքում ապահովել տեխնոլոգիական սարքավորումների, տեխնիկական միջոցների, օբյեկտի կառույցների, տեղակայանքների անվտանգության գոտու տարածքների պարբերական



զննումներ, ինչպես նաև կազմակերպել աշխատողների ուսուցում և որակավորման ստուգում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԿՈՆՍՍԱԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Աբովյան համայնքի Աբովյան բնակավայրի 2-րդ արդյունաբերական թաղամաս թիվ 20 շինություններ հասցեում նախատեսվող այլումինե պրոֆիլների և դետալների արտադրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Շուշանիկ Կարապետյան